ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ առողջապահական անվտանգության նախաձեռնություն

Իրականացման ժամանակահատված: 01.01.2020 - 31.12.2024

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 6 000 000

Ընդհանուր բյուջե: € 6 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

European Centre for Disease Prevention and Control

Նախագծի նկարագրություն:

ԵՄ առողջապահական անվտանգության նախաձեռնությունն ուղղված է տարածաշրջանում կոմպետենտ կադրերի պատրաստմանը՝ փոխանցվող հիվանդությունների հետ կապված մարտահրավերների կանխարգելման և վերահսկման համար, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը՝ անդրսահմանային առողջապահական անվտանգության սպառնալիքների դեմ պայքարի համար։

Ակնկալվող արդյունքներ:

- MediPIET-ի՝ որպես դաշտային համաճարակաբանության ուսուցման ծրագրի (FETP) շարունակություն և հետագա զարգացում.
- Ավելի ուժեղ ազգային համակարգեր և կարողություններ, որոնք անհրաժեշտ են վարակիչ հիվանդություններից եկող սպառնալիքները արդյունավետ գնահատելու, հայտնաբերելու, արձագանքելու և կանխելու համար.
- Գործընկեր երկրների աստիճանական ինտեգրում Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական կենտրոնի (ECDC) աշխատանքներում.
- Պատրաստվածության, արձագանքման և արտակարգ իրավիճակների գործողությունների ուղղությամբ տարածաշրջանային համագործակցության ընդլայնում:

Նախաձեռնության գործունեությունը կազմակերպված է տարբեր աշխատանքային փաթեթների շուրջ.
1. Բուժանձնակազմի կարողությունների զարգացում.
- Ուսումնական նյութերի և կարիքների վերլուծություն.
- Կրթաթոշակառուների երկու հաջորդական խմբերի ուսուցում՝ երկրների դաշտային համաճարակաբանական կարողություններին աջակցելու համար.
- MediPIET ցանցի ամրապնդում՝ նպաստելով ցանցի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը և ուսուցման որակի պահպանմանը.